չէր։ Այս մտքի հետ չէին հաշտուում կալուածատէրերը, այլ ձգտում էին հելլէն-հռոմէական կարգերով՝ ընկճուելուց, յաղթողի գերիշխանութիւնը ճանաչելուց յետոյ էլ, նորից անսահման տէր եւ իշխանաւոր մնալ իրենց նախկին իշխանութեան։ Բայց արիական աշխարհի օրէնքները չէին հաշտուում այդ մտքի հետ. կալուածքը չէր կարող երկու տէր ունենալ, նրա տէրը միմիայն երկրամշակն էր եւ պետութեան պահպանութեան համար կալուածքից չէր կարելի երկու հարկ առնել, այլ մի պետական հարկ. իսկ երկրագործը դուրս էր գալիս իշխանի ճորտութիւնից, հարկատուութիւնից, դառնում էր համապետական հարկատու ժողովուրդ։

## Է.

*Լիվանայի հովիտը եւ Խալխալ։*

Պալխար վտակի հովտին կպած է Ճորոխի այն ընդարձակ, կենդրոնական հովիտը, որն անրաժանելի կերպով միացած Պահլ-Բալխարին եւ կոչւում է Լիվանա։ Ճորոխը այս հովտում ընդունում է ձախից Կոլիկի, Ալսեթի, Օկերի, Ձորի, Բիտի, Ուխշումի, Խորդայի առ-ը, որոնք ոռոգում են համանուն գեղերը, նրանց մացրանները, ախոռները, եայլաները, աւերակ բերդերն ու ամրոցները։ Ապա Ճորոխին միանում է Փեսունիջուր